



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մարտի 2012թ.

N 97-Ն

ք.Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՂԱՎՈՒԶԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 781-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մաղավուզի ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման 2012 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մաղավուզի ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսության զարգացման 2011-2015 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 781-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կառավարության  
«12» մարտի 2012թ.  
N 97-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Օ Ր Ա Գ Ի Ր**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՂԱՎՈՒՋԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
- III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մաղավուզի ենթաշրջանը (այսուհետ՝ Մաղավուզի ենթաշրջան) գտնվում է Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելյան մասում: Այն ընդգրկում է Մաղավուզի, Մեծ Շենի, Մոխրաթաղի, Վարնկաթաղի, Մատաղիսի, Տոնաշենի և Թալիշի համայնքները: Մաղավուզի ենթաշրջանում ընդգրկված համայնքները զբաղեցնում են 22644.9 հա տարածք, որը կազմում է Մարտակերտի շրջանի ընդհանուր տարածքի շուրջ 25.3 տոկոսը:

Մաղավուզի ենթաշրջանի համայնքների զարգացումը հիմնականում պայմանավորված է ագրոպարենային համակարգի զարգացմամբ: Այս ուղղությամբ 2011 թվականին կատարվել են որոշակի աշխատանքներ, մասնավորապես պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք են բերվել խոշոր և մանր եղջերավոր անասուններ, անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկա:

Մաղավուզի ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ 2011 թվականին կատարված աշխատանքների և ստացված արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև ենթաշրջանի համայնքներում կատարված նոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարածաշրջանի համայնքների ագրոպարենային համակարգի համաչափ զարգացման համար պահանջվում է առանձին ոլորտների մասով տարեկան կտրվածքով ծրագրային մոտեցում, ինչով էլ պայմանավորված է Ծրագրի մշակման անհրաժեշտությունը:

### I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

#### **Նպատակը.**

Մաղավուզի ենթաշրջանում առկա հողային, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և համալրման արդյունքում նախադրյալներ ստեղծել բնակչության կենսապայմանների աստիճանական բարելավման, բնակչության արտահոսքի մեղմացման և կանխման, արժանավայել ու անվտանգ ապրելու և բարիքներ ստեղծելու համար:

#### ***Խնդիրները.***

- 1) Մաղավուզի ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսության զարգացման, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական գործունեության ծավալման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:
- 2) Առկա գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք օգտագործման և հողերի վիճակի բարելավման համար հնարավորությունների ստեղծում:
- 3) Մաղավուզի ենթաշրջանի համայնքների բնակչության աշխատունակ հատվածի համար լիարժեք զբաղվածության ապահովում:

**II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Ծրագրի իրագործման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) *Խոշոր և մանր եղջերավոր անասունների ձեռքբերում:* Նախատեսվում է 2012 թվականին 43.0 (քառասուներեք) մլն դրամ ուղղել խոշոր և մանր եղջերավոր անասունների ձեռքբերմանը: Միջոցառման նպատակն է՝ անասնազլխաքանակի ավելացման հետ մեկտեղ ավելացնել անասնապահական մթերքների արտադրությունը, որը կբերի պարենամթերքների ինքնաբավության բարձրացման: Ուղղությունը կարևորվում է նաև վերամշակման հնարավորություն ստեղծելու, հետևաբար՝ աշխատուժի պահանջարկի և ընդհանուր առմամբ բնակչության եկամուտների ավելացման տեսանկյունից: Անասնազլխաքանակի ավելացումը խթան կհանդիսանա նաև կերակուլտուրաների մշակության համար, իսկ վերջինս պայմաններ կստեղծի մեղվաբուծության զարգացման համար:

2) *Պտղատու այգիների հիմնադրում:* Այս ուղղությամբ նախատեսվում է 2012 թվականին կատարել 7.0 (յոթ) մլն դրամի չափով ներդրումներ: Պտղատու այգիների հիմնադրմամբ հնարավոր կլինի մի քանի տարի հետո որոշակիորեն ապահովել բնակչության ֆիզիոլոգիական պահանջը թարմ պտղի նկատմամբ, ինչպես նաև նախադրյալներ կստեղծվեն վերամշակման համար:

Ծրագրի իրագործման համար 2012 թվականին պահանջվող ներդրումներն ըստ եռամսյակների ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

**ՍԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՂԱՎՈՒԶԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ (հազ. դրամ)**

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2012թ.	այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1.	Խոշոր եղջերավոր անասունի և մանր եղջերավոր անասունի ձեռքբերում	43000.0	3000.0	20000.0	10000.0	10000.0
2.	Պտղատու այգիների հիմնադրում	7000.0	-	-	2000.0	5000.0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>50000.0</b>	<b>3000.0</b>	<b>20000.0</b>	<b>12000.0</b>	<b>15000.0</b>

**III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում Ծրագրի իրականացումից ակնկալվում է Մաղավուզի ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջընթաց, որը կդրսևորվի հետևյալ արդյունքներով.

1) անասնապահության ինտենսիվ զարգացման արդյունքում կավելանան անասնազլխաքանակն ու անասնաբուծական մթերքների ծավալը.

2) անասնագլխաքանակի ավելացման արդյունքում կբարձրանա բնական կերահանդակների օգտագործման մակարդակը, կավելանան կերակուլտուրաների ցանքատարածությունները.

3) հիմնադրվելիք պտղատու այգիները բերքատվության կհասնեն չորրորդ տարում, որի արդյունքում կավելանա պտղի արտադրության ծավալը.

4) բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալների ավելացումը նախադրյալներ կստեղծի վերամշակման ոլորտի զարգացման համար.

5) կբարձրանա ենթաշրջանի պարենային ապահովության և ինքնաբավության մակարդակը.

6) գյուղատնտեսության ոլորտի գործունեության զարգացման արդյունքում զգալիորեն կբարձրանա զբաղվածության մակարդակը, կավելանան եկամուտները:

**ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԱՎԱԳՅԱՆ**